Հավելված N 1
ՀՀ Էկոնոմիկայի նախարարի
2025 թվականի ապրիլի 18-ի
N 1141-Լ հրամանի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N
«ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

« » _____ 2025թ.

Հայաստանի Հանրապետության _____ մարզի_____ համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար _____ մի կողմից և ———————— ով գործում է /ընկերության կանոնադրության հիման վրա/պետական գրանցման հիման վրա/, /անձնագիր/ նք. AA 0000000, տրված 00.00.0000թ. 000-ի/ կողմից (այսուհետ՝ Շահառու) մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր) հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մարտի 27-ի N 356-Լ որոշմամբ հաստատված՝ «Բուսաբուծության աջակցության 2025 թվականի» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պայմանագրով շահառուն պարտավորվում է ՀՀ _____ մարզի _____ համայնքի _____ բնակավայրի_____ կադաստրային ծածկագրով ____ հեկտար հողատարածքում կատարել _____ հեկտար (մակերեսը՝ ըստ մշակաբույսերի տեսակների) ---
---
(աշնանացան և գարնանացան ցորեն/գարնանացան գարի/վարսակ/հաճար/եգիպտացորեն /ոլոռ/լոբի/ոսպ/սիսեռ/առվույտ/կորնգան/կերի ճակնդեղ) մշակաբույս(եր)ի (խառը ցանք կամ հիմնական և ծածկոց մշակաբույս դեպքում նշվում են մշակաբույսերի տեսակները) _____ սորտ(եր)ի ցանք, իսկ համայնքապետարանը պարտավորվում է Ծրագրով սահմանված կարգով և ժամկետներում իրականացնել համապատասխան փոխհատուցում փաստացի կատարված ցանքի դիմաց:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Պայմանագրի գինը ձևավորվում է Շահառուի կողմից իրականացված մշակաբույսի տեսակի և դիմումով ներկայացված ցանքի մակերեսի հիման վրա, որը հաշվարկվում է համաձայն Ծրագրի 10-րդ, 11-րդ կետերի և 9-րդ կետի 5-րդ ենթակետի և կազմում է ----------
------ (գումարը՝ տառերով ----------) ՀՀ դրամ:

2.2 Պայմանագրում ամրագրվածից պակաս կատարված ցանքի դեպքում փոխհատուցումը տրամադրվում է համայնքի ղեկավարի հրամանով ստեղծված հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից իրականացված համատարած մոնիթորինգի արդյունքով պարզված փաստացի կատարված ցանքի դիմաց՝ կողմերի միջև կնքվող սույն պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագրի հիման վրա:

2.3 Համատարած մոնիթորինգի արդյունքներով պայմանագրում ամրագրված մշակաբույսի տեսակին և ցանքատարածության մակերեսին համապատասխան ցանքը կատարված լինելու դեպքում փոխհատուցումը տրամադրվում է պայմանագրին համապատասխան:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Համայնքը իրավունք ունի՝

3.1.1 Շահառուին ներկայացնել գումարների հետվերադարձման պահանջ 1-ամսյա ժամկետով: Գումարները չվճարելու պարագայում այն կգանձվի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ կիրառելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 9-ի N 283-Ն որոշումը:

3.2 Համայնքը պարտավոր է՝

3.2.1 Ծրագրի 23-րդ կետով նախատեսված գումարներն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել շահառուների բանկային հաշվեհամարներին, որոնք բռնագանձման ենթակա չեն:

3.3 Շահառուն իրավունք ունի՝

3.3.1 Ստանալ Ծրագրի 23-րդ կետով նախատեսված գումարները, որոնք բռնագանձման ենթակա չեն:

3.4 Շահառուն պարտավոր է՝

3.4.1 Հետվերադարձման պահանջ ներկայացվելու դեպքում 1-ամսյա ժամկետում պատշաճ կերպով իրականացնել գումարի հետվերադարձ: Հետվերադարձը չիրականացնելու պարագայում այն կգանձվի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ կիրառելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 9-ի N 283-Ն որոշումը:

4. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

4.1 Համայնքը Ծրագրի իրականացման ընթացքում, Ծրագրով սահմանված ժամկետներում իրականացնում է համատարած մոնիթորինգ:

4.2. Համատարած մոնիթորինգն իրականացվում է Հանձնաժողովի կողմից:

4.3 Նախարարության ներկայացուցչի մասնակցությամբ մարզպետի աշխատակազմի կողմից իրականացվում է ընտրանքային մոնիթորինգ, ընդ որում մոնիթորինգի ընդգրկելիության նվազագույն չեմը պետք է կազմի համայնքի շահառուների թվի առնվազն 20%-ը:

4.4 Համատարած և ընտրանքային մոնիթորինգների իրականացման ընթացքում Շահառուից կարող է պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.5 Եթե իրականացված համատարած մոնիթորինգի արդյունքում պարզվում է, որ շահառուն խախտել է Ծրագրի և պայմանագրի դրույթները, ապա Շահառուի կողմից իրականացված ցանքը փոխհատուցման ենթակա չէ:

4.6 Մարզպետի աշխատակազմի կողմից ներկայացված մոնիթորինգի բացասական արդյունքների առկայության դեպքում (ծրագրի և պայմանագրի դրույթների խախտում) փոխհատուցման գումար չի տրամադրվում, իսկ տրամադրված լինելու դեպքում նախարարության կողմից համայնքին ներկայացվում է պետական բյուջե հետվերադարձման պահանջ շահառուին փոխհատուցված (համայնքին գումարը հետ է վերադարձնում շահառուն) գումարների մասով:

5. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և Կողմերը այն չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսիք են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

6.2 Սույն Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից և երեք էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6.3 Պայմանագրով չնախատեսված դրույթները կարգավորվում են Ծրագրով սահմանված պահանջներով:

6.4 Պայմանագիրը կարող է փոփոխվել և լուծվել Կողմերի համաձայնությամբ՝ Ծրագրի պահանջների պահպանմամբ: Պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ համաձայնությունը կնքվում է գրավոր:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԱՄԱՅՆՔ	ՇԱՀԱՌՈՒ
ՀՀ _____ մարզի_____ համայնք	_____
ՀՀ ֆինանսների նախարարության	Հասցե՝ ՀՀ _____ մարզ,
գործառնական վարչություն	_____ համայնք, _____ բնակավայր
Հ/Հ 000000000000	___ փող., ____ տուն.
ՀՎՀՀ 00000000	անձնագիր AA 0000000,
ՀՀ _____ մարզի_____համայնքի ղեկավար	տրվ. 00.00.0000թ., 000-ի կողմից
_____	Հեռ.+374 00 000 000
	«_____ ԲԱՆԿ» ԲԲԸ
	Հ/Հ 000000000000000
	ՀՎՀՀ 00000000
_____	_____
(ստորագրություն) Կ. Տ.	(ստորագրություն)